ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 18.02.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԷԼԱԴԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 25092-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**)՝ նախագահությամբ Լիլիթ Ղազանչյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Դավիթ Վարդիկյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Պավել Գյուլումյանի, Ռոման Ահարոնյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Մելքոնյանի և Արսեն Հարությունյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի թիվ ԿԳ-25092-2-Ա որոշման դեմ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Տիգրան Սիմոնյանը (**այսուհետև նաև՝ Դիմող**), դիմելով ՀՀ փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, որ իր երեխայի հետ տեսակցության հարցը կարգավորելու նպատակով դիմել է «Կոնտրա լեգեմ» ընկերությանը, ինչի կապակցությամբ Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնել են փաստաբաններ Ալեքսանդր Կոչուբաևը և Էլադա Ղահրամանյանը:

Ըստ դիմումի և կից ներկայացված նյութերի՝

• թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով՝ ներկայացված հայցադիմումում փաստաբանները թույլ են տվել խախտումներ, որոնց արդյունքում Դատարանն այն վերադարձրել է, իսկ հետագայում կրկին ներկայացվելուց հետո, գործի քննության ընթացքում, չեն ներկայացել երկու հաջորդական՝ 17.03.2025 և 14.04.2025 դատական նիստերին, ինչի արդյունքում գործը թողնվել է առանց քննության:

• թիվ ԵԴ2/4531/02/25 քաղաքացիական գործով՝ ներկայացված հայցադիմումում փաստաբանները թույլ են տվել խախտումներ, որոնց արդյունքում Դատարանը այն

վերադարձրել է 12.05.2025 թվականի որոշմամբ, ինչից հետո այն կրկին չի ներկայացվել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Էլադա Ղահրամանյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Փաստաբան Էլադա Ղահրամանյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Բողոքաբեր**) 07.11.2025 թվականի գրությամբ հայտնել է, որ Պալատից տեղեկացել է մուտքագրված բողոքի մասին, սակայն չի ստացել այն, քանի որ հասանելիություն չունի իր էլեկտրոնային փոստին, իսկ Պալատին տրված հասցեն փոփոխվել է, ինչով պայմանավորված խնդրել է ծանուցումներն ուղարկել այլ հասցեով:

Միաժամանակ, Փաստաբանը խնդրել է լրացուցիչ ժամանակ դիրքորոշում ներկայացնելու համար, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնել ներկայանալ և տեղում ծանոթանալ դիմումին և կից նյութերին, սակայն բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը կրկին որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

Պալատի նախագահի 13.11.2025թ. թիվ 325-Ա/ԿԳ-25091 որոշմամբ փաստաբան Էլադա Ղահրամանյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետերի**, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև նաև՝ Կանոնագիրք**) 3.5.5 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև նաև՝ Հանձնաժողով**), 18.02.2026թ. քննության առնելով փաստաբան Էլադա Ղահրամանյանի (արտոնագիր՝ ԱՀ թիվ 67, հավատարմագիր՝ թիվ 47), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, որոշել է վերջինիս նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման համար:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի</u>** <u>18.02.2026 **թվականի թիվ ԿԳ**-25092 **որոշման էությունը**.</u>

Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է, որ փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանը, ստանձնելով Տիգրան Սիմոնյանի շահերի պաշտպանությունը, չի

կատարել իր մասնագիտական պարտականությունները ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված և ժամանակին: Հանձնաժողովը հաստատված է համարել, որ առաջին հայցադիմումը վերադարձվել է դատարանի կողմից՝ ստորագրված չլինելու և ակնհայտ սխալների պատճառով, հետագայում նույն գործով դատական փաստաթղթերն ուղարկվել են Փաստաբանի կողմից նշված հասցեով, իսկ Փաստաբանը առնվազն տեղեկացված է եղել 17.03.2025թ. դատական նիստի մասին, սակայն երկու հաջորդական դատական նիստերին չներկայանալու հետևանքով հայցը թողնվել է առանց քննության, ինչի արդյունքում վերացվել է նաև կիրառված ապահովման միջոցը: Բացի այդ, երկրորդ հայցադիմումը ևս վերադարձվել է դատարանի կողմից ընդդատության, հասցեական տվյալների և կից ներկայացվող պատճենների պահանջները չպահպանելու հիմքերով: Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ Փաստաբանի վարքագծում առկա են «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Հանձնաժողովի որոշման դեմ 01.05.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք:

Բողոքաբերը Հանձնաժողովի որոշման դեմ ներկայացրած բողոքում նշել է, որ Տիգրան Սիմոնյանը դիմել է ոչ թե իրեն անձամբ, այլ «Կոնտրա լեգեմ» ընկերությանը, և ինքն ընկերության աշխատակիցներից մեկն է եղել: Ըստ Բողոքաբերի՝ ինքը Դիմողի հետ անձամբ պայմանագիր չի կնքել, նրանից գումար չի ստացել և Դիմողի կողմից չի լիազորվել դատարանում նրա ներկայացուցիչը լինելու կամ դատական նիստերին մասնակցելու համար: Բողոքաբերը նշել է նաև, որ ինքը Դիմողին տվել է միայն բանավոր և գրավոր խորհրդատվություն, իսկ ընկերությունում եղել են այլ փաստաբաններ ևս, որոնցից ցանկացածին Դիմողը կարող էր լիազորել: Նա պնդել է, որ Դիմողը բազմիցս իրեն ասել է չզբաղվել իր գործով, դատական ծանուցումները կարող էին իրեն անձամբ չհասնել, քանի որ ընկերության տարածքը մեծ է եղել և ունեցել է բազմաթիվ աշխատակիցներ, հայցադիմումների վերադարձը չի կարող ինքնին դիտվել որպես ոչ պատշաճ մասնագիտական օգնության ապացույց, իսկ հետագայում փոխվել է նաև հանձնարարության բնույթը: Բողոքաբերը հղում է արել նաև վաղեմության հարցին և կիրառված կարգապահական տույժի անհամաչափությանը՝ նշելով, որ շուրջ 13 տարվա մասնագիտական գործունեության ընթացքում նախկինում երբևէ կարգապահական տույժի չի ենթարկվել:

Բողոքաբերը խնդրել է վերացնել Հանձնաժողովի որոշումը:

4. **<u>Դիմողի համառոտ դիրքորոշումը</u>**.

Դիմողից բացատրություն չի պահանջվել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Էլադա Ղահրամանյանը ստանձնել է Տիգրան Սիմոնյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, նամակագրությամբ, ինչպես նաև Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*
2. Դիմողը վճարել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված ծառայության արժեքը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, վճարման անդորրագրի պատճեներով:*
3. Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում նշել է, որ պայմանագրում առկա ստորագրությունը իրենն է: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանի հայտնած դիրքորոշմամբ:*
4. Տիգրան Սիմոնյանի և Էլադա Ղահրամանյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված կամ պայմանագրի առարկան փոփոխված լինելու վերաբերյալ կարգապահական գործում առկա չէ որևէ ապացույց:
5. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով առաջին հայցադիմումը վերադարձվել է դատարանի կողմից՝ ստորագրված չլինելու և դրանում ակնհայտ սխալների առկայության պատճառով, ապա կրկին ներկայացվելուց հետո այն ընդունվել է վարույթ, և կիրառվել է հայցի ապահովման միջոց: *Նշված փաստերը հաստատվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*
6. Հայցադիմումում որպես ծանուցման հասցե՝ Փաստաբանի կողմից նշվել է քաղաք Երևան, Սայաթ Նովա 40,80/20, իսկ որպես կապի միջոց՝ 097-20-87-86 հեռախոսահամարը, որը պատկանում է Փաստաբանին, իսկ ծանուցման հասցեն Փաստաբանի գործունեության հասցեն է: *Նշված փաստերը հաստատվում են Փաստաբանի բացատրությամբ, հայցադիմումի պատճենով, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում հրապարակված տվյալներով:*
7. Կողմերի միջև նամակագրությունից հետևում է, որ Փաստաբանն առնվազն տեղեկացված է եղել 17.03.2025թ. նշանակված դատական նիստի մասին: Միաժամանակ, նույն նամակագրությունից հետևում է, որ Դիմողը Փաստաբանից պահանջել է բացատրություն, թե ինչու վերջինս չի ներկայացել դատական նիստերին, իսկ Փաստաբանը որպես պատճառ նշել է, որ ծանուցված չի եղել, սակայն չի վկայակոչել

լիազորագրի բացակայությունը:

8. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 14.04.2025թ. որոշմամբ թողնվել է առանց քննության այն պատճառով, որ Դիմողը կամ Փաստաբանը չի ներկայացել երկու հաջորդական՝ 17.03.2025թ. և 14.04.2025թ. դատական նիստերին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, նամակագրություններով, դատական ակտի պատճենով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

9. Թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով Դատարանի 14.04.2025թ. որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ, հետևաբար վերացվել է նաև Դատարանի 10.01.2025թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

10. Փաստաբանը կարգապահական վարույթի ընթացքում նշել է, որ բացակայել է անհրաժեշտությունը մասնակցելու թիվ ԵԴ2/10721/02/24 քաղաքացիական գործով նշանակված նիստերին, քանի որ փոխվել է հանձնարարությունը *(տեսակցության կարգ սահմանելը փոխարինվել է բնակության վայրը Դիմողի մոտ որոշելու պահանջով):* Միևնույն ժամանակ Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում հայտնել է, որ չի հիշում, թե երբ է փոխվել հանձնարարությունը: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ձայնագրությամբ:*

11. Թիվ ԵԴ2/4531/02/25 քաղաքացիական գործով կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձվել է դատարանի կողմից ընդդատության կանոնների, հասցեական տվյալների և կից ներկայացվող պատճենների պահանջները չպահպանելու հիմքերով: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի

վերացնելու մասին:

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, Հանձնաժողովի որոշումը, կարգապահական գործի նյութերը, գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետերի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 3.5.5-**րդ ենթակետի համաձայն՝** *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ.վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ.վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետից հետևում է, որ փաստաբանի կողմից վստահորդին ցուցաբերվող իրավաբանական օգնությունը պետք է լինի ոչ թե ձևական, այլ իրական, արդյունավետ և վստահորդի օրինական շահերի պաշտպանությանն ուղղված: Նորմում ամրագրված՝ նյութերի ուսումնասիրության, վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրության, վստահորդին հնարավոր իրավական հետևանքների մասին իրազեկման և հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների իրականացման պարտականությունները փոխկապակցված են և միասին ձևավորում են փաստաբանի մասնագիտական նվազագույն պարտադիր չափանիշը: Հետևաբար, նշված նորմի իմաստով փաստաբանից պահանջվում է գործել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված և ժամանակին՝ ձեռնարկելով այնպիսի քայլեր, որոնք օբյեկտիվորեն անհրաժեշտ են վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Այս մեկնաբանությունը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի այն մոտեցմանը, ըստ որի՝ իրավաբանական օգնությունը և ընդհանրապես պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինեն գործնական և արդյունավետ, այլ ոչ թե տեսական և պատրանքային: Ուստի այն

դեպքերում, երբ փաստաբանը չի ուսումնասիրում գործի նյութերը, չի գնահատում կիրառելի իրավակարգավորումը, չի իրազեկում վստահորդին հնարավոր հետևանքների մասին կամ չի կատարում հանձնարարության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ գործողությունները, նրա վարքագիծը կարող է գնահատվել որպես Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտում, քանի որ այդպիսի օգնությունը չի համապատասխանում արդյունավետ իրավաբանական պաշտպանության չափանիշին:

Խորհուրդը հիմնավոր չի համարում Բողոքաբերի այն փաստարկը, թե ինքը Դիմողի հետ անձամբ պայմանագիր չի կնքել և նրանից գումար չի ստացել, քանի որ Դիմողը դիմել է «Կոնտրա լեգեմ» ընկերությանը: Սույն հանգամանքը, նույնիսկ եթե դիտարկվի Բողոքաբերի նկարագրած ձևով, ինքնին չի բացառում նրա կարգապահական պատասխանատվությունը, քանի որ կարգապահական գործի նյութերով հաստատված է, որ Բողոքաբերը փաստացի ներգրավված է եղել Դիմողի գործով, դատարան ներկայացնելու նպատակով կազմել է հայցադիմումներ, որոնք Դիմողի կողմից ներկայացվել են դատարան, ներկայացրել է Դիմողի շահերը և հաղորդակցվել է վերջինիս հետ հենց այդ կարգավիճակով: Կարգապահական պատասխանատվության հարցի լուծման տեսանկյունից էական է ոչ միայն այն, թե ում հետ է ձևականորեն կնքվել պայմանագիրը կամ ում է փոխանցվել վճարը, այլ այն, թե արդյոք փաստաբանն իրականում փաստացի ստանձնել և իրականացրել է վստահորդի շահերի պաշտպանություն: Սույն գործով այդ հանգամանքը Հանձնաժողովի կողմից հիմնավորված կերպով համարվել է հաստատված:

Խորհուրդը հիմնավոր չի համարում նաև Բողոքաբերի այն պնդումը, թե վերջինս Դիմողին տվել է միայն խորհրդատվություն և չի ստանձնել դատական ներկայացուցչություն: Այդ պնդումը հակասում է կարգապահական գործում հաստատված փաստերին, քանի որ Բողոքաբերը ոչ միայն հաղորդակցվել է Դիմողի հետ, այլև կազմել է հայցադիմումներ, իսկ հայցադիմումներում որպես ծանուցման հասցե նշել է իր գործունեության հասցեն և որպես կապի միջոց՝ իրեն պատկանող հեռախոսահամարը: Նման վարքագիծը չի սահմանափակվում միայն խորհրդատվությամբ, այլ վկայում է դատական պաշտպանության կազմակերպման և իրականացման մեջ փաստացի ներգրավված լինելու մասին:

Խորհուրդը հատուկ անդրադառնում է Բողոքաբերի այն պնդմանը, թե Դիմողը իրեն լիազորագիր չի տվել դատական նիստերին մասնակցելու համար: Նախ, եթե Դիմողը դիմել էր փաստաբանական օգնություն ստանալու և իր շահերը ներկայացնելու նպատակով, ապա ողջամիտ չէ ենթադրել, թե նա դիտավորությամբ հրաժարվել է տրամադրել ներկայացուցչության համար անհրաժեշտ լիազորությունը: Երկրորդ, նույնիսկ եթե լիազորագրի ձևակերպման հարցում եղել է բացթողում, դրա պատշաճ ապահովումը

գտնվում էր հենց Փաստաբանի մասնագիտական պարտականությունների շրջանակում: Փաստաբանը, ստանձնելով անձի շահերի պաշտպանությունը և կատարելով դատավարական գործողություններ, պարտավոր էր ապահովել ներկայացուցչության պատշաճ ձևակերպումը և ստանալ անհրաժեշտ լիազորությունները, այլ ոչ թե հետագայում հղում անել այդ հանգամանքին՝ որպես պատասխանատվությունը բացառող փաստարկի: Երրորդ, կողմերի միջև նամակագրությունից հետևում է, որ Դիմողը Փաստաբանից պահանջել է բացատրություն, թե ինչու վերջինս չի ներկայացել դատական նիստերին, իսկ Փաստաբանը, պատասխանելով այդ հարցադրմանը, որպես պատճառ նշել է, որ ծանուցված չի եղել, սակայն հղում չի կատարել լիազորագրի բացակայությանը: Այդ պայմաններում լիազորագրի բացակայության վերաբերյալ պնդումը Խորհուրդը գնահատում է որպես հետագայում ձևավորված պաշտպանական դիրքորոշում, այլ ոչ թե դատական նիստերին չներկայանալու իրական պատճառ: Ավելին, կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանը հայտնել է, որ Դիմողից լիազորագիր չի վերցրել, քանի որ ծանուցագրեր չի ստացել:

Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի բացատրությունները դատական նիստերին չներկայանալու պատճառների մասով հակասական են: Բողոքաբերը միաժամանակ վկայակոչում է լիազորագրի բացակայությունը, ծանուցված չլինելը և հանձնարարության բնույթի փոփոխությունը: Եթե, ըստ Բողոքաբերի, ինքը լիազորված չէր մասնակցելու դատական նիստերին, ապա անհասկանալի է, թե ինչու է որպես արդարացում նշում ծանուցման բացակայությունը կամ հանձնարարության հետագա փոփոխությունը: Նույն կերպ, եթե պատճառը հանձնարարության փոփոխությունն էր, ապա նույնքան անհասկանալի է, թե ինչու է պնդում, թե ի սկզբանե լիազորված չի եղել: Այս փոխադարձաբար անհամատեղելի բացատրությունները ևս հաստատում են Հանձնաժողովի եզրահանգումների հիմնավորվածությունը: Բացի այդ, Բողոքաբերը չի հիշել, թե երբ է փոխվել հանձնարարությունը, իսկ իր բացատրությամբ նոր պահանջով հայցը ներկայացվել է միայն 28.04.2025թ., այն դեպքում, երբ նախորդ գործով հայցը թողնվել էր առանց քննության արդեն 14.04.2025թ.: Հետևաբար, նույնիսկ եթե հետագայում հանձնարարության բովանդակությունը փոխվել է, ապա այդ հանգամանքը չէր կարող արդարացնել մինչև այդ արդեն հարուցված գործով դատավարական պարտականությունների չկատարումը: Ավելին, կարգապահական նիստի ընթացքում փաստաբանը նշել է, որ հանձնարարությունը փոխվել է միմիայն գրավոր, սակայն գործում նման ապացույց առկա չէ:

Խորհուրդը հիմնավոր չի համարում նաև Բողոքաբերի այն պնդումը, թե դատական ծանուցումները կարող էին իրեն անձամբ չհասնել, քանի որ «Կոնտրա լեգեմ» ընկերության տարածքը մեծ է եղել, ունեցել է բազմաթիվ աշխատակիցներ, և ինքը անձամբ

պատասխանատու չէր այնտեղ մուտք եղած բոլոր փաստաթղթերի համար: Հանձնաժողովի կողմից հաստատված է, որ դատական փաստաթղթերն ուղարկվել են հենց այն հասցեով, որը Բողոքաբերը նշել էր որպես ծանուցման հասցե, և ստացվել են այդ հասցեում: Եթե Փաստաբանն ինքն է իր գործունեության հասցեն նշում որպես դատական հաղորդակցության հասցե, ապա դրա վերահսկման պարտականությունը կրում է ինքը: Ավելին, նամակագրությամբ հաստատվել է, որ առնվազն 17.03.2025թ. դատական նիստի մասին Բողոքաբերը տեղեկացված է եղել, ուստի ծանուցված չլինելու մասին պնդումը հերքվում է նաև գործով առկա հաղորդակցության բովանդակությամբ:

Հարկ է նաև նշել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակված են եղել դատական նիստերի նշանակման վերաբերյալ տվյալները, մինչդեռ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Բողոքաբերը փորձել է պարզել դատական նիստերի օրերը, վերահսկել գործի ընթացքը կամ իր չներկայանալու պատճառների մասին պատշաճ կերպով տեղեկացնել դատարանին կամ Դիմողին:

Խորհուրդն անդրադառնալով Բողոքաբերի այն պնդմանը, թե հայցադիմումների վերադարձը ինքնին չի կարող դիտվել որպես ոչ պատշաճ մասնագիտական վարքագծի դրսևորում, փաստում է, որ յուրաքանչյուր վերադարձված հայցադիմում ինքնաբերաբար չի նշանակում կարգապահական խախտում: Սակայն սույն գործով խնդիրը չի սահմանափակվել միայն վերադարձի փաստով: Հանձնաժողովը գնահատել է վարքագծի ամբողջական շղթան՝ առաջին հայցադիմումի վերադարձը ստորագրության բացակայության և ակնհայտ սխալների պատճառով, դատական ծանուցումների նկատմամբ ոչ բավարար վերահսկողությունը, երկու հաջորդական դատական նիստերին չներկայանալը, դրա հետևանքով հայցը առանց քննության թողնելը, ապահովման միջոցի վերացումը և դրանից հետո կրկին թերի հայցադիմում ներկայացնելը: Հետևաբար, Հանձնաժողովի որոշման հիմքում դրվել է ոչ թե մեկ տեխնիկական վրիպակի փաստ, այլ փոխկապակցված մի շարք թերությունների ամբողջությունը:

Խորհուրդը ընդունելի չի համարում նաև Բողոքաբերի այն փաստարկը, թե առաջին հայցադիմումի և կից միջնորդության արդյունքում Դիմողը շուրջ ութ ամիս կարողացել է տեսակցել երեխային, և այդ պատճառով փաստաբանական օգնությունը չի կարող գնահատվել որպես ոչ պատշաճ: Այդ հանգամանքը չի վերացնում այն փաստը, որ հետագայում նույն գործով հայցը թողնվել է առանց քննության, իսկ դրանով վերացվել է նաև նախկինում կիրառված ապահովման միջոցը: Այսինքն, նույնիսկ եթե որոշակի ժամանակահատվածում առկա է եղել ժամանակավոր պաշտպանություն, հետագա ոչ պատշաճ վարքագիծն ի վերջո հանգեցրել է այդ պաշտպանության կորստին, ուստի նշված փաստարկը չի կարող չեզոքացնել խախտման փաստն ու դրա հետևանքները:

Բողոքաբերը նշել է, որ Դիմողը «Կոնտրա լեգեմ» ընկերությանը դիմել է 2024

թվականին, և այդ հիմքով պնդել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության անցնելը: Սակայն Խորհուրդը գտնում է, որ նման մոտեցմամբ առաջնորդվելը կհանգեցներ այն իրավիճակին, երբ շարունակվող կամ հետագայում նոր դրսևորումներ ստացած վարքագիծը դուրս կմնար կարգապահական գնահատումից: Մինչդեռ սույն գործով քննության առարկա են եղել ոչ թե միայն նախնական շփումները, այլ նաև 2025 թվականին դրսևորված փոխկապակցված գործողություններն ու անգործությունը, այդ թվում՝ դատական նիստերին չներկայանալը, հայցը առանց քննության թողնելը, ապահովման միջոցի վերացումը և կրկին ներկայացված հայցադիմումի վերադարձը: Միաժամանակ, Հանձնաժողովի նիստի ընթացքում ևս պարզվել է Դիմողի կողմից համապատասխան հանգամանքների մասին տեղեկանալու պահը՝ 28.05.2025թ., ինչը ևս ենթակա էր գնահատման վաղեմության հարցի համատեքստում: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովն իրավացիորեն չի համարել կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած:

Ինչ վերաբերում է կիրառված կարգապահական տույժի համաչափությանը, ապա Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը պատշաճ կերպով հաշվի է առել ինչպես մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները: Մեղմացնող հանգամանք է դիտվել այն, որ Փաստաբանը նախկինում կարգապահական տույժ չի ունեցել: Սակայն այդ հանգամանքը, թեև հաշվի է առնվում որպես Փաստաբանի անձը բնութագրող մեղմացնող տվյալ, ինքնին չի բացառում «խիստ նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը, երբ արձանագրված վարքագիծը հանգեցրել է հայցի առանց քննության թողնելուն, ապահովման միջոցի վերացմանը և վստահորդի համար գույքային անբարենպաստ հետևանքների առաջացմանը: Ուստի «խիստ նկատողություն» կարգապահական տույժը, ինչպես նաև «Դեոնթոլոգիա» թեմայով լրացուցիչ վերապատրաստման պարտականությունը, սույն գործի հանգամանքներում չեն կարող դիտվել անհամաչափ կամ չհիմնավորված:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը ճիշտ է գնահատել գործի փաստական հանգամանքները և հիմնավոր կերպով արձանագրել, որ Փաստաբանի վարքագծում առկա են ««Փաստաբանության մասին» Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի խախտման հատկանիշներ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի թիվ ԿԳ-25092-2-Ա որոշմամբ թույլ չի տրվել որևէ նորմի խախտում, ուստի **<u>Բողոքաբերի փաստարկները հերքվել են Որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով:</u>**

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Բողոքում ներկայացված չէ որևէ հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով Որոշումը վերացնելու համար, ուստի՝ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը՝**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի «Փաստաբան Էլադա Էդուարդի Ղահրամանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25092-2-Ա որոշման դեմ Էլադա Էդուարդի Ղահրամանյանի կողմից 01.05.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.02.2026 թվականի թիվ ԿԳ-25092-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Լիլիթ Ղազանչյան**

01 հունիսի 2026թ.
թիվ ԿԳ/11-Ա
ք. Երևան